# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2009 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ)
## Խորհրդի հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Խորհրդի անդամներ.

| | | | |
|---|---|---|---|
| Բարսեղ Բեգլարյան | Խորհրդի Նախագահ | | 13.05.09թ. |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Էնդել Ստեփանյան | Խորհրդի անդամ | | 13.05.09թ. |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Մանուկ Մկրտչյան | Խորհրդի անդամ | | 13.05.09թ. |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Վահրամ Ղազարյան | Խորհրդի անդամ | | 13.05.09թ. |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Մանվել-Ջոն Վարթանյան | Խորհրդի անդամ | | 13.05.09թ. |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

# Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

| | | | |
|---|---|---|---|
| Աշոտ Օսիպյան | Վարչության Նախագահ, Գործադիր տնօրեն | | 12.05.09թ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Արթուր Հակոբյան | Վարչության Նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ | | 12.05.09թ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Գայանե Մարգարյան | Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ | | 12.05.09թ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Գարիկ Ադամյան | Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչության պետ | | 12.05.09թ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| Արթուր Մելիքյան | Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ | | 12.05.09թ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

# ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԸ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

## Ակտիվներ

Հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի ավարտին Բանկի ակտիվները կազմել են 27,970,040 հազ. դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 1,769,227 հազ. ՀՀ դրամով կամ 6.8%-ով, իսկ 31.12.08թ.-ի համեմատ նվազել են 1,662,227 հազ. ՀՀ դրամով կամ 5.6%-ով:

Նշված ժամանակահատվածների համեմատ հաշվետու եռամսյակի ակտիվների աճի տեմպերը շարունակում են կրել 2008 թվականի ունեցած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսության մեջ գործարար ակտիվության մակարդակի նվազման ազդեցությունը:

2009 թվականի 1-ին եռամսյակի ավարտին, նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ, Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 5,556,061 հազ. ՀՀ դրամ կամ 4.6 անգամ, և վարկային պորտֆելի՝ 995,538 հազ. ՀՀ դրամ կամ 9.5%, աճով, ինչպես նաև հետգնված արժեթղթերով գրավադրված արժեթղթերի (2,235,758 հազ. դրամ) աճով: Նախորդ տարվա տարեվերջի համեմատ, Բանկի ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների՝ 3,452,453 հազ. ՀՀ դրամ կամ 4.6 անգամ, և վարկային պորտֆելի՝ 708,888 հազ. ՀՀ դրամ կամ 5.8% նվազմամբ:

## Վարկեր

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին վարկային պորտֆելը կազմել է 11,480,707 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 995,538 հազ. դրամով կամ 9.5%-ով, իսկ 31.12.08թ.-ի համեմատ նվազել է 708,888 հազ. ՀՀ դրամով կամ 5.8%-ով:

2008թ. Բանկի կողմից տրամադրված վարկերի աճը պայմանավորված է տարվա ընթացքում միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորման ակտիվ գործընթացով, մասնաճյուղային ցանցի ընդլայնմամբ, վարկային ծրագրերում մասնաճյուղերի ներգրավմամբ ու վարկավորման տարածքաշրջանային կենտրոնների ձևավորմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրվել է 4,679,497 հազ. ՀՀ դրամի վարկ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում՝ 4,413,700 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և գերակշռող մասը դասակարգված են որպես ստանդարտ վարկեր: Այս ցուցանիշը վկայում է վարկային ռիսկի կառավարման բարձր մակարդակի մասին:

## Արժեթղթեր

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին Բանկի ներդրումներն արժեթղթերում (այդ թվում` հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր) կազմել են 4,222,765 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1,911,899 հազ. ՀՀ դրամով կամ 31.2%-ով, իսկ 31.12.08թ. համեմատ` 256,718 հազ. ՀՀ դրամով կամ 5.7%-ով:

Նախորդ ժամանակահատվածների համեմատ, արժեթղթերում կատարված ներդրումների ծավալների նվազումը պայմանավորված է ֆինանսական շուկայում արձանագրված էական փոփոխությունների պատճառով պետական արժեթղթերի պորտֆելի ծավալների և կառուցվածքի վերանայմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի կողմից պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալը կազմել է 6,373,506 հազ. ՀՀ դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 31,606,110 հազ. ՀՀ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական արժեթղթերով կատարված գործառնությունների ծավալների նվազումը նույնպես պայմանավորված է ֆինանսական շուկայում արձանագրված էական փոփոխություններով:

## Արտարժութային գործառնություններ

Հաշվետու ժամանակահատվածում Բանկի արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը` 118,579.3 հազ. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը` 187,148.7 հազ. ՌԴ ռուբլի,

Եվրո գործարքների ծավալը` 48,723.7 հազ. եվրո:

Վերը նշված արտարժութային գործառնությունների արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 48,748 հազ. ՀՀ դրամ` նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 97,361 հազ. ՀՀ դրամի դիմաց: Արձանագրված նվազումը պայմանավորված է արտարժույթային գործառնությունների շուկայում գործարքների ծավալների և տնտեսական ակտիվության նվազմամբ:

## Պարտավորություններ և Կապիտալ

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի պասիվների աճը (1,769,227 հազ. ՀՀ դրամով կամ 6.8%-ով) պայմանավորված է ընդհանուր կապիտալի 2,521,947 հազ. ՀՀ դրամ կամ 49.4% աճով: Միևնույն ժամանակ, Բանկի պարտավորությունները նվազել են 752,720 հազ. դրամով կամ 3.6%-ով:

Պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորված է այլ պարտավորությունների նվազմամբ:

Հարկ է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ֆիզիկական անձանցից ներգրաված ժամկետային ավանդների մնացորդներն աճել են 3,282,774 հազ. ՀՀ դրամով կամ 4.2 անգամ:

31.12.08թ.-ի համեմատ, Բանկի պասիվները նվազել են 1,662,227 հազ. ՀՀ դրամով կամ 5.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պարտավորությունների (1,749,300 հազ. ՀՀ դրամով կամ 7.9%-ով) նվազմամբ: Միևնույն ժամանակ, Բանկի ընդհանուր կապիտալն աճել է 87,073 հազ. ՀՀ դրամով կամ 1.2%-ով:

Ֆիզիկական անձանցից ներգրաված ժամկետային ավանդների մնացորդներն աճել են 748,356 հազ. ՀՀ դրամով կամ 21.09%-ով` կազմելով 4,296,634 հազ. ՀՀ դրամ:

## Կապիտալ

Հաշվետու եռամսյակում Բանկի ընդհանուր կապիտալի աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պայմանավորված է կանոնադրական կապիտալի համալրմամբ, ստացված էմիսիոն եկամտով, ինչպես նաև չբաշխված շահույթի ավելացմամբ:

31.12.08թ. համեմատ, Բանկի ընդհանուր կապիտալի աճը պայմանավորված է վերագնահատման պահուստում վաճառքի համար մատչելի ֆինանսկան ակտիվների վերագնահատումից ստացված արդյունքի հաշվառմամբ: Նախորդ տարի վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված արդյունքը ներառված է եղել Ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվության համապատասխան տողում:

## Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտները նվազել են 62,664 հազ. ՀՀ դրամով կամ 14%-ով՝ կազմելով 511,021 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների գերակշռող մասը բաժին է ընկնում վարկային ներդրումներից ստացված եկամուտներին (454,148 հազ. ՀՀ դրամ կամ 88.8%) և արժեթղթերից ստացված եկամուտներին (48,525 հազ. ՀՀ դրամ կամ 9.5%):

Հաշվետու եռամսյակում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից զուտ եկամուտները կազմել են 39,596 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 14,437 հազ. ՀՀ դրամով կամ 57.4%-ով:

Արտարժութային գործառնություններից ստացված զուտ շահույթը նվազել է 48,613 հազ. ՀՀ դրամով կամ 49.9%-ով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է հաշվետու եռամսյակի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

| հազ. ՀՀ դրամ | 2008թ. 1-ին եռամսյակի համար | 2009թ 1-ին եռամսյակի համար |
|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 448,357 | 511,021 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | (154,930) | (245,332) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **293,427** | **265,689** |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 50,627 | 71,598 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | (25,468) | (32,002) |
| **Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ** | **25,159** | **39,596** |
| Արտարժութային գործառնություններից զուտ շահույթ/ (վնաս) | 97,361 | 48,748 |
| Վաճառքի նպատակով պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս) | 22,268 | 17,809 |
| Այլ եկամուտ | 19,969 | 15,396 |
| Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին | (19,074) | (10,909) |
| Անձնակազմի գծով ծախսեր | (113,472) | (167,612) |
| Հիմնական միջոցների մաշվածություն | (23,243) | (37,634) |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա | (1,901) | (1,964) |
| Այլ ծախսեր | (110,045) | (176,641) |
| **Շահույթ/(վնաս) հարկումից առաջ** | **190,449** | **(7,522)** |
| **Շահութահարկի գծով ծախս** | **(11,904)** | **(6,481)** |
| **Շահույթ հարկումից հետո** | **178,545** | **(14,003)** |

Հաշվետու եռամսյակում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 245,332 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 90,402

հազ. ՀՀ դրամով կամ 58.4%-ով: Ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում հաճախորդների հաշիվների դիմաց վճարված տոկոսային ծախսերին, որը կազմել է 129,680 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Բանկի անձնակազմի գծով ծախսերն աճել են 54,140 հազ. ՀՀ դրամով կամ 47.7%-ով՝ կազմելով 167,612 հազ. ՀՀ դրամ, հիմնական միջոցների մաշվածության ծախսերն աճել են 14,391 հազ. ՀՀ դրամով կամ 61.9%-ով՝ կազմելով 37,634 հազ. ՀՀ դրամ, ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը՝ 63 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 1,964 հազ. ՀՀ դրամ:

## Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու եռամսյակի արդյունքներով, Բանկը կրել է 14,003 հազ. ՀՀ դրամի վնաս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 178,545 հազ. ՀՀ դրամ շահույթի դիմաց: Հաշվետու եռամսյակի 14,003 հազ. ՀՀ դրամ վնաս ստացված արդյունքը պայմանավորված է միջանկյալ հրապարակային ֆինանսական հաշվետվությունների կազմման ստանդարտի փոփոխմամբ՝ հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտները միջազգային ֆինանսական հաշվետվողական ստանդարտներին համապատասխան հաշվետվությունը ներկայացնելու հանգամանքով: Նախկինում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառվող վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված արդյունքը ներառված է եղել Ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվության համապատասխան տողում: Ներկայումս, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված արդյունքը հաշվառվում է Հաշվապահական հաշվեկշռի Կապիտալի կազմում: Հաշվետու եռամսյակի արդյունքներով, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտը կազմել է 101,076 հազ. դրամ:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են՝
ROE (կապիտալի շահութաբերություն)՝ -0.19%,
ROA (ակտիվների շահութաբերություն)՝ -0.05%:

Հաշվետու եռամսյակի 14,003 հազ. ՀՀ դրամ վնասի պատճառով մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել 13 դրամ վնաս մեկ բաժնետոմսին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 230 ՀՀ դրամ շահույթի դիմաց:

## Ծառայություններ և հաճախորդներ

Հաշվետու եռամսյակում Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալների աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, որն իր արդյունքներով արտացոլվում է կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված զուտ եկամուտներում, կազմել է 20,971 հազ. ՀՀ դրամ կամ 41.4%:

Վճարահաշվարկային գործառնությունների ծավալային աճ ապահովող ծառայություններից է հանդիսանում կոմունալ վճարումների և հեռախոսավարձերի ընդունումը, որը նախորդ տարվա նույն ժամակահատվածի համեմատ, աճել է 406,140.9 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 582,798.9 հազ. դրամ:

2009 թվականի մարտի 31-ի դրությամբ Բանկի ակտիվ հաճախորդների թվաքանակը կազմել է 29,189, որը 2008 թ. մարտի 31-ի համեմատ աճել է 17,629-ով: Բանկի ակտիվ հաճախորդների կազմը և կառուցվածքն արտացոլված են ստորև բերվող աղյուսակում:

| **Բանկի հաճախորդներ** | **Հաճախորդների քանակը** | | |
|---|---|---|---|
| | **31.03.08** | **31.03.09** | **(+/-)** |
| Իրավաբանական անձինք | 454 | 1,084 | 630 |
| Ֆիզիկական անձինք | 11,106 | 28,105 | 16,999 |
| **Ընդամենը** | **11,560** | **29,189** | **17,629** |

Հաշվետու եռամսյակի ավարտին Բանկի հաճախորդների 3.7%-ն իրավաբանական, իսկ 96.3%-ը ֆիզիկական անձիք են:

## Վճարահաշվարկային գործառնություններ

### Չեկեր

Հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում Բանկը շարունակել է իրականացնել չեկերի տրամադրման և սպասարկման գործառնությունները: Հաշվետու ժամանակաշրջանում Բանկն ակտիվ համագործակցել է American Express և Mashreqbank ընկերությունների հետ և տրամադրել է 66 հատ չեկ:

### Ակրեդիտիվներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում Բանկը թողարկել է 212,800 ԱՄՆ դոլար և 407,400 Եվրո ընդհանուր գումարով ակրեդիտիվներ, որոնցից 407,400 Եվրո տրամադրվել է EBRD-ի հետ իրականացվող առևտրի խթանման ծրագրի շրջանակներում:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում Բանկը թողարկել էր 202,336 ԱՄՆ դոլար և 144,633 Եվրո ընդհանուր գումարով ակրեդիտիվներ, որոնցից 144,633 Եվրո

տրամադրվել էր EBRD-ի հետ իրականացվող առևտրի խթանման ծրագրի շրջանակներում:

<u>Միջազգային դրամական փոխանցումներ</u>

Հաշվետու եռամսյակում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 22,335,459 հազ. ՀՀ դրամին համարժեք գումար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 33,717,107 հազ. ՀՀ դրամին համարժեք գումարի դիմաց:

## Պլաստիկ քարտեր

Հաշվետու եռամսյակում Բանկի ակտիվ գործող պլաստիկ քարտերի թիվն աճել է 1,012 հատով, որից 487-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, իսկ 525-ը՝ MasterCard միջազգային պլաստիկ քարտերին: Հաշվետու եռամսյակի ավարտին պլաստիկ քարտերի քանակը կազմել է 22,054 հատ:

## Ամփոփ ֆինանսական տվյալներ

Հազ. ՀՀ դրամ

| Ցուցանիշի անվանումը | 2008 թվ., 1 եռ. | 2009 թվ., 1 եռ. |
|---|---|---|
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 178,545 | (14,003) |
| Սեփական կապիտալի միջին մեծություն | 4,763,887 | 7,520,495 |
| Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), % | 3.75% | -0.19% |
| | | |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 178,545 | (14,003) |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն | 28,098,823 | 29,989,954 |
| Ակտիվների շահութաբերություն (ROA), % | 0.64% | -0.05% |
| | | |
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 178,545 | (14,003) |
| Գործառնական եկամուտ | 483,652 | 419,240 |
| Զուտ շահույթի մարժա (NPM), % | 36.92% | -3.34% |
| | | |
| Գործառնական եկամուտ | 483,652 | 419,240 |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն | 28,098,823 | 29,989,954 |
| Ակտիվների օգտագործման գործակից (AU), % | 1.72% | 1.40% |
| | | |
| Ընդհանուր ակտիվների միջին մեծություն | 28,098,823 | 29,989,954 |
| Սեփական կապիտալի միջին մեծություն | 4,763,887 | 7,520,495 |
| Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) | 5.90 | 3.99 |
| | | |
| Զուտ տոկոսային եկամուտ | 293,427 | 265,689 |
| Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն | 19,377,521 | 17,553,835 |
| Զուտ տոկոսային մարժա (NIM) | 1.51% | 1.51% |
| | | |
| Տոկոսային եկամուտ | 448,357 | 511,021 |
| Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն | 19,377,521 | 17,553,835 |
| Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն | 2.31% | 2.91% |
| | | |
| Տոկոսային ծախսեր | 154,930 | 245,332 |
| Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր | 8,210,689 | 12,037,820 |

| | | |
|---|---|---|
| Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր | 1.89% | 2.04% |

| | | |
|---|---|---|
| Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 178,545 | (14,003) |
| Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. հատ | 774 | 1072 |
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) | 0.23 | (0.01) |

| | | |
|---|---|---|
| Սպրեդ | 0.43% | 0.87% |

## Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով և Բանկի տարեկան բյուջեով սահմանված նպատակային թիրախներովև չափանիշներով և դիտարկվում են հետևյալ ցուցանիշների աճի մակարդակներով.

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների շարունակական աճի ապահովում՝ հիմնական շեշտադրումը դնելով վարկային ներդրումների աճի վրա,
- ժամկետային ավանդների մնացորդների և ցպահանջ ավանդների մնացորդների աճի ապահովում,
- Բանկի միջնորդական ծառայությունների ընդլայնման, սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,
- վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով նախատեսվում է ընդլայնել համագործակցող կազմակերպությունների շրջանակները, ավելացնել Բանկի քարտապանների թիվը, որի ապահովման նպատակով կավելացվի նաև ATM-երի թիվը և տեղաբաշխվածության մակարդակը,
- Բանկի զարգացման ռազմավարության ներքո, ինչպես նաև նոր հաճախորդների ներգրավման և մասնաճյուղային ցանցի ընդլայնման նպատակով, նախատեսվում է ստեղծել նոր մասնաճյուղեր ՀՀ այն տարածաշրջաններում, որտեղ ներկա չեն հիմնական մրցակից դիտարկվող բանկերի մասնաճյուղերը կամ, դրանց առկայության դեպքում, Բանկի մասնաճյուղերի ստեղծումը համարվում է ռազմավարական նշանակություն ունեցող և Բանկի զարգացման համար անհրաժեշտ քայլ,
- եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,
- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ,
- վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարծանագրվի նաև զուտ շահույթի աճ:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ֆինանսական արդյունքների մասին

«31» մարտի 2009թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ք.Երևան, Պուշկինի 19

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթա-գրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան (չստուգված) | Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակա-շրջան (աճողական) (չստուգված) | Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան (չստուգված) | Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) (չստուգված) |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 6 | 511,021 | 511,021 | 448,357 | 448,357 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | 6 | (245,332) | (245,332) | (154,930) | (154,930) |
| **Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ** | | **265,689** | **265,689** | **293,427** | **293,427** |
| | | | | | |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 7 | 71,598 | 71,598 | 50,627 | 50,627 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | 7 | (32,002) | (32,002) | (25,468) | (25,468) |
| **Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ** | | **39,596** | **39,596** | **25,159** | **25,159** |
| | | | | | |
| Արտարժութային գործարքներից զուտ շահույթ | | 48,748 | 48,748 | 97,361 | 97,361 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտ | | 17,809 | 17,809 | 22,268 | 22,268 |
| Այլ եկամուտներ | 8 | 15,396 | 15,396 | 19,969 | 19,969 |
| Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին | 9 | (10,909) | (10,909) | (19,074) | (19,074) |
| Անձնակազմի գծով ծախս | 10 | (167,612) | (167,612) | (113,472) | (113,472) |
| Հիմնական միջոցների մաշվածություն | 18 | (37,634) | (37,634) | (23,243) | (23,243) |
| Ոչ նյութական ակտիվների մաշվածություն | 19 | (1,964) | (1,964) | (1,901) | (1,901) |
| Այլ ծախսեր | 11 | (176,641) | (176,641) | (110,045) | (110,045) |
| | | | | | |
| **Շահույթը մինչև հարկումը** | | **(7,522)** | **(7,522)** | **190,449** | **190,449** |
| Շահութահարկի գծով ծախս | 12 | (6,481) | (6,481) | (11,904) | (11,904) |
| **Շահույթը հարկումից հետո** | | **(14,003)** | **(14,003)** | **178,545** | **178,545** |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | | (0.01) | (0.01) | 0.23 | 0.23 |

Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.2009թ.

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

«31» մարտի 2009թ.

### ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Պուշկինի 19

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթա-գրություններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (Չստուգված) | Նախորդ ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում | 14 | 7,071,640 | 10,524,093 |
| Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 15 | 3,695,792 | 974,768 |
| Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ | 16 | 11,446,275 | 12,164,364 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 17 | 2,097,610 | 2,996,407 |
| Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 26 | 2,235,758 | 1,591,742 |
| Հիմնական միջոցներ | 18 | 1,163,169 | 1,181,602 |
| Ոչ նյութական ակտիվներ | 19 | 51,782 | 53,747 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 12 | 5,511 | 4,992 |
| Վաճառքի համար պահվող ակտիվներ | 20 | 46,505 | 46,505 |
| Այլ ակտիվներ | 21 | 155,998 | 94,047 |
| ***Ընդամենը՝ ակտիվներ*** | | **27,970,040** | **29,632,267** |
| **Պարտավորություններ** | | | |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 22 | 7,145,877 | 4,859,672 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 23 | 12,551,955 | 16,601,573 |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթեր | 24 | 400,789 | 400,789 |
| Ընթացիկ հարկի գծով պարտավորություն | | 84,224 | 112,348 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 12 | - | - |
| Այլ պարտավորություններ | 25 | 155,520 | 113,283 |
| ***Ընդամենը՝ պարտավորություններ*** | | **20,338,365** | **22,087,665** |
| **Կապիտալ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 27 | 5,362,005 | 5,362,005 |
| Էմիսիոն եկամուտ | | 766,001 | 766,001 |
| Գլխավոր պահուստ | | 270,000 | 270,000 |
| Այլ պահուստներ | | 126,808 | 25,732 |
| Չբաշխված շահույթ (վնաս) | | 1,106,861 | 1,120,864 |
| ***Ընդամենը՝ կապիտալ*** | | **7,631,675** | **7,544,602** |
| ***Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ*** | | **27,970,040** | **29,632,267** |

Բանկի վարչության նախագահ ______________________ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Գլխավոր հաշվապահ ______________________ Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.2009թ.

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին**

**«31» մարտի 2009թ**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Պուշկինի 19**

*(հազար դրամ)*

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ/վնաս | Գլխավոր պահուստ | Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատումից պահուստներ* | Հիմնական միջոցների գծով վերագնահատումից պահուստներ* | Չբաշխված շահույթ/վնաս | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հոդվածներ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ) | | | | | | | |
| ***1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2008թ. (աուդիտված)*** | **3,640,000** | **-** | **250,000** | **14,964** | **-** | **559,992** | **4,464,956** |
| **2. Վերահաշվարկված մնացորդը** | **3,640,000** | **-** | **250,000** | **14,964** | **-** | **559,992** | **4,464,956** |
| **3. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր, այդ թվում** | **-** | **-** | **-** | **10,768** | **-** | **-** | **10,768** |
| **3.1 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **-** |
| **3.2.Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատումից աճ կամ նվազում** | **-** | **-** | **-** | **186,925** | **-** | **-** | **186,925** |
| **3.3.Վաճառքի համար մատչելի ներդրումներից աճ կամ նվազում** | **-** | **-** | **-** | **(176,157)** | **-** | **-** | **-176,157** |
| **4. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում** | **1,722,005** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **1,722,005** |
| **4.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ** | **1,722,005** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **1,722,005** |
| **5. Նախորդ տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **580,872** | **580,872** |
| **6. Բաշխված շահութաբաժիններ** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **-** | **-** |
| **7. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում** | **-** | **766,001** | **-** | **-** | **-** | **-** | **766,001** |
| **8. Ներքին շարժեր, այդ թվում** | **-** | **-** | **20,000** | **-** | **-** | **(20,000)** | **-** |
| **8.1. Մասհանումներ գլխավոր պահուստին** | **-** | **-** | **20,000** | **-** | **-** | **(20,000)** | **-** |
| ***9. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբերի 2008թ. (աուդիտված)*** | **5,362,005** | **766,001** | **270,000** | **25,732** | **-** | **1,120,864** | **7,544,602** |

| Հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| *1. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2009թ. (ստուգված)* | 5,362,005 | 766,001 | 270,000 | 25,732 | - | 1,120,864 | 7,544,602 |
| 9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | - | - | - | - | - | - | - |
| 10.Վերահաշվարկված մնացորդը | 5,362,005 | - | 270,000 | 25,732 | - | 1,120,864 | 7,544,602 |
| 11. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր, այդ թվում՝ | - | - | - | 101,076 | - | - | 101,076 |
| 11.1 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում | - | - | - | 0 | - | - | - |
| 11.2.Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատումից աճ կամ նվազում | - | - | - | 450,496 | - | - | 450,496 |
| 11.3.Վաճառքի համար մատչելի ներդրումներից աճ կամ նվազում | - | - | - | (349,420) | - | - | -349,420 |
| 12. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | - | - | - | - | - | - | - |
| 12.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում | - | - | - | - | - | - | - |
| 13. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս) | - | - | - | - | - | (14,003) | (14,003) |
| 14. Բաշխված շահութաբաժիններ | - | - | - | - | - | - | - |
| 15. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝ | - | - | - | - | - | - | - |
| 16. Ներքին շարժեր, այդ թվում՝ | - | - | - | - | - | - | - |
| 16.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | - | - | - | - | - | - | - |
| *17. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31 մարտի 2008թ. (ստուգված)* | 5,362,005 | 766,001 | 270,000 | 126,808 | - | 1,106,861 | 7,631,675 |

Բանկի վարչության նախագահ՝ ________ Ա.ՕՍԻՊՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.2009թ.

Գլխավոր հաշվապահ՝ ________ Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ**
**«31» մարտի 2009թ.**

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ք.Երևան, Պուշկինի 19**

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթա-գրություն | Հաշվետու ժամանակաշրջան (ստուգված) | Նախորդ ժամանակաշրջան (ստուգված) |
|---|---|---|---|
| **1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | | |
| **Ստացված տոկոսներ** | | 529,472 | 2,084,536 |
| **Վճարված տոկոսներ** | | (175,080) | (742,289) |
| **Ստացված կոմիսիոն գումարներ** | | 71,598 | 282,940 |
| **Վճարված կոմիսիոն գումարներ** | | (32,002) | (103,329) |
| Վաճառքի համար մատչելի արժեթղթերից օգուտ | | 17,809 | 17,191 |
| Արտարժույթային գործառնություններից իրացված շահույթ | | 48,748 | 351,975 |
| Այլ ստացված եկամուտներ | | 29,984 | 35,874 |
| Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ | | 281 | 7,637 |
| Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | | (122,642) | (478,128) |
| Վճարված այլ գործառնական ծախսեր | | (229,039) | (565,871) |
| *Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը* | | 139,129 | 890,536 |
| Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում) | | | |
| Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում | | 120,025 | (150,279) |
| Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | | 243,703 | 2,144,027 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | | 1,044,750 | (2,530,894) |
| Այլ ակտիվներ | | (51,323) | 319,241 |
| Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում) | | | |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | | 278,102 | 1,253,640 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | | (5,340,684) | (1,269,921) |
| Այլ պարտավորություններ | | (215,474) | (391,550) |
| Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը | | (3,781,772) | 264,800 |
| Վճարված շահութահարկ | | (32,000) | (87,095) |
| **Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | (3,813,772) | 177,705 |
| **2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | | |
| Ներդրումային արժեթղթերի առք/վաճառք և իրացում | | 232,828 | 2,243,694 |
| Հիմնական միջոցների առք | | (13,826) | (784,962) |
| Հիմնական միջոցների վաճառք | | | 1,096 |
| Ոչ նյութական ակտիվների առք ու վաճառք | | (5,376) | (16,710) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | | | |
| **Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | 213,626 | 1,443,118 |
| **3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | | |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում | | | 2,488,006 |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում) | | | 400,000 |
| Բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | | 1,125,290 | 1,518,403 |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | | 300,000 | 300,000 |
| **Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | 1,425,290 | 4,706,409 |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)** | | (2,174,856) | 6,327,232 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ | | 11,039,386 | 4,860,663 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց | | 1,675,706 | (148,509) |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ | | 10,540,236 | 11,039,386 |

Բանկի վարչության նախագահ ____________ Ա.ՕՍԻՊՅԱՆ

ԿՏ

Գլխավոր հաշվապահ ____________ Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.2009թ.